ժանրային պատկանելության ցուցիչներ: Սակայն միջնադարյան գրականության մեջ նկատվող այն ընդհանուր օրինաչափությունը, որ նույն ժանրանվանումով կարող են ներկայացվել բոլորովին տարբեր ժանրեր[11], նկատելի է նաև Դավրիժեցու պատմագրքում: Օրինակ՝ «պատմություն»՝ այս դեպքում՝ եզրաբառով են տարազվում, ասենք, և՛ Սարգիս եպիսկոպոսի ու տեր Կիրակոսի վարքը (գլուխ ԻԱ), և՛ պիղծ Չոմարի սատակման մասին զրույցը (գլուխ Խ), և՛ հայ ժողովրդին բաժին հասած ողբերգությունների վկայագրությունները (գլուխ ԺԲ, ԺԳ), և այլն:

Բովանդակային առումով Դավրիժեցու պատմագրքում կարելի է առանձնացնել երկու ընդհանրական բնույթի սևեռում, որոնց շուրջ էլ պատմիչը փորձում է հյուսել իր երկի կառույցը: Այդ սևեռումներում, բնականաբար, ինչպես բնորոշ է պատմագրության ժանրի բովանդակային ընդգրկումներին՝ «ոչ թե կյանքի մի դրվագ կամ մասնակի միջադեպ է պատմվում, այլ ժողովրդի պատմական ճակատագրի համար բախտորոշ որևէ իրադարձություն, դարաշրջան կամ պատմական ողջ ընթացք է ներկայացվում՝ իր բազմաթիվ մասնակիցներով, դեպքերի խաչաձևումներով, բախումներով, բարոյաէթիկական մտահանգումներով»[12]:

Նախ՝ պարսից Շահ-Աբասի, ինչպես նաև օսմանցիների ավերածությունները Հայաստանում, ու հայ ժողովրդի մի ստվար հատվածի գերեվարումը Պարսկաստան՝ Շահ-Աբասի կողմից: Բովանդակային այս սևեռման որոշակի մաս է կազմում նաև հարևան վրացիների պատմության համընկնող շրջանի վկայագրությունը: Լորետա Դանեղյանն այս բովանդակային սևեռման ներքին տարածքում, ելակետ ընդունելով «Գիրք պատմութեանց»-ում ներկայացված պատերազմական իրադարձությունները, առանձնացնում է հետևյալ փուլերը. «ա) պարսկական արշավանքի սկիզբը և

---

[11] Այդ մասին տե՛ս ***Д. С. Лихачев,*** Поэтика древнерусской литературы, էջ 57.

[12] ***Մայիս Ավդալբեգյան,*** Հայ պատմագրության ժանրային մի քանի առանձնահատկություններ, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, էջ 20: